1864.
9 Սեպտեմբեր
ըստ հին տոմարի :

Թիւ 27.
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ·

1864.
13 Սեպտեմբեր
ըստ նոր տոմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրատարակութեան, խմբագրութեան եւ բաժանորդագրութեան կեդրոնատեղին է Մանչեսթեր։

—Նամակ, յօդուած, գիր եւ դրամ (ազատ ի ծախուց փոստայի) ուղղել յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, հետեւեալ ադրէսով.

M. le Chevalier K. Vardapete Shahnazariants,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)



Տարեկան գինն հանդերձ ծախուք փոստայի, որ երթայ Անգլիոյ եւ Ֆրանսայի ընդհանուր եւ ընկերական, է 25 ֆ. ֆ.

—Այն քաղաքներն ուր փոստայի ծախքն առանց [illegible] է։

—Վեցամսեանն . . . . . . . . . . 13 ,,

—Եռամսեանն . . . . . . . . . . 7 ,,

—Մէկ թերթի գինն է Մանչեսթեր . . . . . 5

այլուր . . . . . . . . . . 7

—Բաժանորդք [illegible]

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպօլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սենեակն ի Ղալաթա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն .—Հալէպ Յովհաննէս Աղայ Փիրըզճեանովի սենեակն. —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն. —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն. —Կալկաթա Պ. Պետրոս Սարգսեանցի սենեակն. —Բաթավիա Պ. Մանուկ Որդանանեանի սենեակն. —Լոնդոն Աղայ Մաքսուտոֆֆի սենեակն. — Փարիս Աղայ Պօղոս Արփաճեանի սենեակն.—Մարսիլիա Աղայ Մարգար Գասպիկեանցի եւ Աղայ Յարութիւն Անդրէասեանի սենեակներն ։ Առ այժմ ուզողներն կրնան վերոյգրեալ սենեկաց մէկէն ստանալ մինչեւ որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաց եւ ընթերցասէր քաղաքներ։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ·

Տեսութիւն Քաղաքականութեան.—Թղթակցութիւնք.—Զրօսական.—Անեկդոտներ.

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Եւրոպայի արդի քաղաքականութիւնն նշանաւոր իրողութիւն չընծայեր ։ Հիւսիս եւ Հարաւ Դանմարգի եւ Հելվետիոյ մէջ քաղաքական հորիզոնն դղրդմամբ եւ որոտմամբ յուզուեցան, այլ բարեբախտաբար այն մրրիկներուն յաջորդեցին հանդարտութիւն, եւ հորիզոնն ըստ առաջնոյն պարզելով՝ ամենայն մարդ կենցաղագէտ շատ կամ սակաւ պարզութեամբ կդիտէ Եւրոպայի աղաղակն եւ Գերմանիոյ պառակտումներն մինչեւ որ Պրուսիա կամ Աւստրիա, մէկն զմիւսն Դաշնակցութենէն վարէ, եւ անոր բախտն ինքնիշխան տնօրինէ ։

—Վիեննայի խորհրդակցութիւնն ընդմիջելով կշարունակէ եւ Դանմարգի եւ Շլեզվիգի սահմաններն որոշելու խնդիրն գրեթէ աւարտեցաւ գէթ թուղթի վերայ, երկուստեք համաձայնութեամբ. ամենադժուարին կնճիռն գանձական խնդիրն է, որ կյուսացուի թէ մինչեւ ամսոյս 15-20 նոյնպէս աւարտի ։ Այնուհետեւ հակառակութեան նիւթն Գերմանիոյ եւ Դանմարգի մէջէն վերցուելով կկենտրոնանայ միայն Գերմանիոյ պետութեանց մէջ, որոնք 10էն աւելի, յիշատականներով Դիետի առեանն կխճողեն, ջանալով, ամեն մէկն, երբեք դքսութիւններէն մէկն կամ երկուքն կամ երեքն համանգամայն ժառանգելու իրաւունքն յառաջ բերելով, մոռնալով անտարակոյս որ Պրուսիոյ արքայի պէս ամենակարող իշխան հակառակորդ եւ դատախազ ունին ։

—Գինեվի յուզմունքն եւ աղմուկներն բարեբախտաբար հանդարտեցան եւ կալանաւորութիւններն վերջացան. այլ քննութիւնն տակաւին կտեւէ եւ յանցաւորաց դատն եւ պատիժն տնօրինելն ժամանակի կարօտ է ։

—Ալգերիայի ապստամբութիւնն, որ 20 օր առաջ, իբրեւ վերջացած կդրուէր եւ կկարծուէր, այժմ նորէն արծարծեցաւ աւելի ահաւոր կերպիւ ։ Ապստամբներն իրենց ձեռօք իրենց արտ, արմտիք եւ բնակարան այրելով անմատչելի լեռ եւ անտառ եւ անապատ կքաշուին որպէս զի ամենայն ուժով դէմ դնեն օտարի աշխարհակալութեանն ։

—Հիւսիսային Ամերիկայի լուրերն կարեւոր ինչ չեն ընծայեր ։ Պ. Լինկոլն երեք եւ կէս տարի պատերազմելէն, մէկ միլիոն մարդոց արիւն հեղլէն եւ 2,000 միլիոն փառօ այրելու վատնելէն յետոյ տակաւին 1861 թուի ցնորքն կգգուէ եւ սուինի ծայրիւ Հարաւայիններն նուաճել կերազէ ։ Ատլանտայէն եւ Զարլստոնէն ամենեւին նորալուր չկան. Մորիլի առջեւ կծեծկուին, նոյնպէս Շենադօ ձորին մէջ, ուր ըստ ոմանց Հարաւայինք կյաղթեն, ըստ այլոց Հիւսիսայինք ։ Պետերսբուրգի պաշարումն չգիտեմք վերցուած է թէ ոչ, չգիտեմք թէ հոն նոր ականներն կփորեն թէ ոչ. այս ինչ ճշգրտապէս գիտեմք որ սպարապետ Գրանտն դարձեալ իր սիրելի շարժումներն ձեռք առաւ. նա, քանի մի ամսուան մէջ Ցամս գետն քանի մի անգամ անցաւ եւ վերադարձաւ ։ Այժմ ինչպէս վերջին լուրերն կծանուցանեն, նա Վելդոնի երկաթուղին բռներ կեցեր է, ուստի թէեւ առաջ 3-5,000 մարդ կորսնելով յետս մղուեցաւ, այլ թարմ զօրաց օգնութեամբ վերստին գրաւեց զայն, ուր տակաւին կկենայ ։ Ընկերհաշտականներն բազմաթիւ գումարներ խմբելով հաշտութեան պայմաններ հայթայթել կջանան. իսկ Պ. Լինկոլն Ռիջմոնդ հաշտարար թերթելն ի պաշտօնէ անհիմն ըլլալն կծանուցանէ ։

— Թուրքաստան. — Դանուբեան իշխանութեանց Խորհրդարանն բացուեցաւ իշխան Կուզայի առենախօսութեամբն, որուն պատասխանեց Խորհրդարանն ամսոյս 2ին յայտնելով իր գոհութիւնն եւ խոստանալով իր բացարձակ ձեռնտուութիւնն ։ Նոյնպէս բացուեցաւ Սերվիոյ Խորհրդարանն տիրող իշխանի հայրենասիրական առենաբանութեամբն, զոր տեղւոյ նուազութիւնն մեզ չներեր թարգմանել եւ մեր ընթերցողաց հաղորդել ։ Հոս կփրել նաեւ մեր ընթերցողաց ծանուցանել թէ Պօլսի ազգային քաղաքական ժողովոյ անդամոց ընտրութիւնն ալ լրացաւ եւ թէ, յուսալի է, որ

